

Արարատ Մ. Հակոբյան  
Պատմ. գիտ. դոկտոր

## Ա. ՄԻԿՈՅԱՆ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ-ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾՉԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ\*

**Բանալի բառեր** – Ա. Միկոյան, պաշտոն, 1937 թվականի կարոտախտ, բոլշևիկ, փաստեր, դեկրետ, կոմկուս, դրվագ, Ղարաբաղ, ինքնորոշում, անկախություն:

### Մուտք

Վերջին շրջանում մեզանում աշխույժ քննարկումների նյութ են դարձել խորհրդային ժամանակաշրջանի հայազգի բոլշևիկ գործիչների՝ Ա. Ամիրյանի, Ս. Կասյանի, Ա. Միկոյանի և մյուսների անունով կոչվող փողոցները, արձանները, հուշատախտակները անվանափոխելու կամ նորերի տեղադրման հարցերը: Հանրային և նույնիսկ իշխանական մակարդակներով բանավեճի պատճառ դարձած նման թեմաներից մեկն էլ խորհրդային ակնավոր կուսակցական-պետական գործիչ **Անաստաս Միկոյանի** արձանը Երևանի կենտրոնում տեղադրելու հարցն է:

Պատմական ճշմարտության առջև չմեղանչելու համար հարկ է ընդգծել, որ Ա. Միկոյանը խորհրդային պետության գոյության ավելի քան 70 տարիների ընթացքում եղել է ամենաբարձր դիրքի ու պաշտոնի հասած հայազգի կուսակցական ու պետական գործիչը: Նա տասնյակ տարիներ շարունակ ՀամԿ(բ)Կ – ԽՄԿԿ կենտկոմի քաղբյուրոյի անդամ էր, ԽՍՀՄ մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ, իսկ իր քաղաքական կարիերայի վերջում (1964–1965 թթ.) զբաղեցրեց պետական ամենաբարձր պաշտոնը՝ բազմելով ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահի աթոռին:

Անշուշտ, անուրանալի են Միկոյանի մատուցած ծառայությունները Խորհրդային Միությանը և կոմունիստական կուսակցությանը և պետք է ասել, որ ժամանակին խորհրդային պետությունը դրանք ըստ արժանվույն է գնահատել: Դեռ Ա. Միկոյանի կենդանության օրոք, նրա անունն ու գործը հավերժացնելու համար, քաղաքներ ու փողոցներ են անվանակոչվել, այդ թվում Խորհրդային Հայաստանում:

ԽՍՀՄ փլուզումից և կոմունիստական ամբողջատիրության վերացումից հետո վերանայման ենթարկվեցին խորհրդային-կոմունիստական արժեքները, ուստի հայ բոլշևիկ մի շարք գործիչների, այդ թվում նաև Ա. Միկոյանի գործունեության գնահատման հարցում ևս ցուցաբերվեց քննադատական մոտեցում, կատարվեցին անվանափոխություններ: Սակայն վերջին շրջանում ակտիվացել են կոմունիստամետ ուժերը, խորհրդային-կոմունիստական «լավ օրերի» կարոտախտով ապրող սոցիալական խմբերը, որոնք հանրային քննարկումներով, մամուլով, հեռուստատեսությամբ

\*Հոդվածն ընդունվել է տպագրության 25.10.2017:

և այլ միջոցներով համառորեն բարձրացնում են բոլշևիկ կուսակցական-պետական գործիչներին վերաբժնորելու, նրանց անունները հավերժացնելու հարցը: Այդ նախաձեռնություններին որոշակիորեն տուրք են տալիս նաև հանրապետության իշխանությունները, համենայն դեպս՝ Երևանի քաղաքային իշխանությունը: Մասնավորապես առաջարկվում է Երևանի կենտրոնում կանգնեցնել Ա. Միկոյանի արձանը: Հարկ է նշել, որ խորհրդային արժեքների ու հիշողությունների վերակենդանացման հրահանգը բխում է Ռուսաստանի որոշակի շրջանակներից: Պատահական չէ, որ վերջերս Մոսկվայում բացվել է Ի. Ստալինի արձանը:

Դժվար չէ կռահել, որ այս հարցը զուտ տեխնիկական կամ գեղագիտական խնդիր չէ, այլ հետապնդում է քաղաքական հեռագնա նպատակներ. այն է՝ «վերակենդանացնել» անցյալը, կարոտախտ առաջացնել մարդկանց մեջ, քայլ առ քայլ ձանապարհի հարթել դեպի խորհրդային-կոմունիստական «լավ ու բարի ժամանակները»: Մարդկանց մոտ հնի վերադարձի մտայնության ձևավորման համար որոշակի հող են ստեղծում ժողովրդի ներկայիս մեղմ ասած ոչ բարվոք սոցիալ-տնտեսական պայմանները, երկրում ահագնացող գործազրկությունը, արտագաղթը, մենաշնորհները, կոռուպցիան և այլն: Հանրապետության սոցիալական առանձին շերտերում դժգոհությունները խթանելու համար գործուն աշխատանք են տանում մանավանդ ՌԴ կոմկուսի կողմից հովանավորվող և ուղղորդվող Հայկոմկուսը և կոմունիստամետ ուժերը:

Հանրագումարի բերելով Հայկոմկուսի նախընթաց շուրջ 9 տասնամյակների գործունեությունը՝ վստահաբար կարելի է ասել, որ նա այդ ողջ ընթացքում գործնականում **դեմ է եղել Հայաստանի անկախությանը**: Հայ բոլշևիկները այդպիսին են եղել նաև Առաջին Հանրապետության ժամանակ: Նրանք շարունակ դավում էին Հայաստանի անկախությանը: Հայկոմկուսը Առաջին Հանրապետության 7-8 կուսակցություններից միակն էր, որը ջանք չէր խնայում ներսի ու հատկապես դրսի ուժերով խորտակելու Հայաստանի անկախությունը: Ի վերջո, քեմալաբոլշևիկյան գործակցության շնորհիվ 1920 թ. աշնանը նրանք հասան իրենց նպատակին: Արդյունքում՝ կործանվեց Առաջին Հանրապետությունը և նրա տարածքները բաժանվեցին Ռուսաստանի և Թուրքիայի միջև:

Կարմիր բանակի օգնությամբ Հայաստանի մի հատվածը ներառելով «ԽՍՀՄ բազմազգ ժողովուրդների ինտերնացիոնալ ընտանիքում»՝ Հայկոմկուսը 70 տարի շարունակ անբաժան իշխեց՝ ավելորդ համարելով անգամ խոսել անկախ պետականության մասին: Վստահաբար կարելի է պնդել, որ ներկա փուլում Հայկոմկուսը, թերևս, միակ կուսակցությունն է, որ ըստ էության դեմ է Հայաստանի անկախությանը: Նա ծրագրեր է փայփայում այս կամ այն կերպ Հայաստանը կրկին Ռուսաստանին միացնելու համար՝ անգամ կարևորություն չտալով, թե ներկա Ռուսաստանը պոտինյան է, թե գյուգանովյան: Ըստ կոմունիստների ու կոմունիստամետ ուժերի՝ միայն Ռուսաստանը կարող է լինել հայ ժողովրդի անվտանգության և ապահով կյանքի երաշխավորը:

## 1. Մի քանի դիտարկումներ հայ կոմունիստ գործիչների ու Միկոյանի մասին

Սովորաբար այս կամ այն գործչին, մտածողին կամ գիտնականին գնահատելու և նրա անունը հավերժացնելու համար հաշվի են առնում տվյալ անձի ստեղծած արժեքները, թողած վաստակն ու մատուցած ծառայությունները՝ իր հայրենիքին ու ժողովրդին, իսկ ավելի լայն իմաստով՝ մարդկությանը: Տվյալ դեպքում խոսելով խորհրդային շրջանի հայազգի կուսակցական-պետական հայտնի գործիչների մասին՝ հարկ է նշել, որ իրոք եղել են առանձին անհատներ, որոնք, լինելով մարքսլենինյան գաղափարների կրող, որոշ դեպքերում դրսևորել են նաև ազգային նկատագիր, մեր երկրի ու ժողովրդի պատմության մեջ թողել են բարի անուն և մնայուն

հետք: Մեր կարծիքով՝ նման մարդկանց թվին կարելի է դասել Ալ. Մյասնիկյանին, Ս. Լուկաշինին (Սրապիոնյան), Ա. Խանջյանին, Աջ. Հովհաննիսյանին և ևս մի քանիսի:

Ինչ վերաբերում է մեր քննության նյութ հանդիսացող Ա. Միկոյանի քաղաքական դիմագծին, ապա նրա կյանքի ու գործունեության գնահատականը, մեր կարծիքով, դրական չէ: Այս կապակցությամբ առանձնապես նկատելի է տասնամյակների ընթացքում հայ հանրության մեջ ձևավորված ոչ բարենպաստ հայացքը նրա անձի նկատմամբ՝ հայ ժողովրդի ազգային շահերին ոչ բավարար նվիրումով ծառայելու տեսանկյունից: Կարելի է վստահաբար ասել, որ ներկայումս էլ հայ հասարակության տիրապետող մասի կարծիքը Ա. Միկոյանի անձի ու գործի վերաբերյալ ընդհանուր առմամբ դրական չէ, և դա ձևավորվել է ժամանակի ընթացքում ու փոխանցվել մինչև մեր օրերը: Եվ սա պատահական չէ, որովհետև այս ամենի հիմքում կա պատմություն, որի մասին ստիպված ենք խոսել **փաստերով**:

Հայտնի իմաստության համաձայն՝ ժողովուրդն իր հավաքականության մեջ, իր գնահատականներում չի սխալվում, և վերջին հաշվով նա ճիշտ է դուրս գալիս: Հիշեցնենք նաև հայ ժողովրդին բնորոշ ևս մեկ հատկանիշ. տովորաբար նա առավել գնահատում ու մեծարում, նույնիսկ սրբացնում է իր նահատակ դարձած ղեկավարին, գործչին, տվյալ պարագայում անգամ բոլշևիկ ղեկավար-գործիչներ Ալ. Մյասնիկյանին, իսկ առավելապես՝ Ա. Խանջյանին: Վերջինիս հատկապես այն բանի համար, որ նահատակվեց օտար դարձած քաղաքում՝ Թբիլիսիում (Թիֆլիսում), ինչպես Արշակ թագավորը՝ Շապուհի, այս դեպքում՝ Ստալինի կամակատար Լ. Բերիայի ձեռքով: Ի տարբերություն Ա. Միկոյանի՝ առավել ցածր պաշտոն զբաղեցրած Ա. Խանջյանին ծանր ժամանակներում անգամ ժողովուրդը ծածուկ թե բացահայտ հիշել ու գնահատել է: Հոգ չէ, որ կարելի է նրան վերաբերող փաստեր բերել, որ ՀԿ(Բ)Կ կենտկոմի 1-ին քարտուղարի պաշտոնում ինքը նույնպես թույլ է տվել սխալներ և ոչ ազգանպաստ արտահայտություններ: Միգուցե 1930-ականների բռնաճնշումների աղետալի շրջանում այլ կերպ հնարավոր էլ չէր...:

Ինչ վերաբերում է Ա. Միկոյանին, ապա նա խորհրդային այն փոքրաթիվ կուսակցական-պետական ղեկավար գործիչներից է, որը որևէ կերպ ստալինյան բռնաճնշումների շորշոփն անգամ չի տարել: Ավելին, քաղաքական բռնաճնշումների վերելքի շրջանում (1935 թ.) նա ընտրվել է ՀամԿ(Բ)Կ կենտկոմի քաղքյուրոյի անդամ: Ա. Միկոյանն իր երկարատև կուսակցական-պետական գործունեությունը սկսել է Լենինի ժամանակներից և ավարտել բրեժնևյան շրջանում և այդ ողջ ընթացքում կարողացել է հարմարվել քաղաքական կոնյունկտուրային, ներկուսակցական պայքարի ամեն տեսակի վայրիվերումներին և մնալ անվնաս: Ավելին, նա կարողացել էր շարունակաբար բարձրանալ կուսակցական-պետական ղեկավար պաշտոնների սանդղակով՝ հասնելով ընդհուպ մինչև ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահի պաշտոնին:

Քաղաքական բռնաճնշումների ենթարկված մյուս հայ գործիչների օրինակով կարելի է պնդել, որ եթե ստալինյան ժամանակներում Ա. Միկոյանը փորձեր Հայաստանի ու հայ ժողովրդի օգտին անգամ որևէ միտք արտահայտել, էլ չենք խոսում գործնական քայլ անելու մասին, ապա, անկասկած, նա էլ կարժանանար մահվան ու արքորի դատապարտվածների ձակատագրին: Մենք չենք բացառում, որ խրուշչովյան այսպես կոչված «ձնհալի» տասնամյակում տնտեսական գետնի վրա Ա. Միկոյանը Հայաստանի համար առանձին օգտակար գործեր կատարած լինի՝ հաշվի առնելով, որ ժամանակներն արդեն համեմատաբար անվտանգ էին: Բացի այդ՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ընտրություններում նա գրեթե միշտ պատգամավոր է ընտրվել Հայաստանի ընտրողների կողմից, ուստի և ընդունված կարգով պարտավոր էր կատարել ժողովրդին տված նախընտրական խոստումները: **Սակայն այս շրջանում նույնպես նա անդրդվելի է մնացել հայ ժողովրդի արդարացի պահանջների հանդեպ իր հստակորեն բացասական վերաբերմունքի մեջ:**

Ուստի խորհրդային ժամանակաշրջանի հայ կուսակցական-պետական գործիչներին պետք է առաջին հերթին գնահատել նրանց մատուցած ծառայությունների, կատարած մնայուն գործերի և ժողովրդի շրջանում թողած բարի անունի հիման վրա: Նման պարագայում, եթե ստալինյան ծանր ժամանակների հայ կուսուհիստ գործիչներ Ալ. Մյասնիկյանը, Ս. Լուկաշինը, Ա. Խանջյանը և մյուսները, այնուամենայնիվ, արժանի են գնահատանքի և իրենց անվան ու հիշատակի հավերժացման, ապա, մեր կարծիքով, Ա. Միկոյանն այդ քննությունը չի բռնում:

Խորհրդային-կոմունիստական ամբողջատիրության ժամանակաշրջանում Ա. Միկոյանը հասկանալիորեն մեծարվել է՝ պետական պաշտոնական մակարդակով: Որոշ շրջանակների կողմից նման փորձեր են արվում նաև մեր ժամանակներում: Փաստերի միակողմանի շարադրմամբ գրքեր են լույս տեսնում, կատարվում են հրապարակումներ, հնչում են ելույթներ հեռուստատեսությամբ և այլն: Բանը հասել է այնտեղ, որ շատ հայ բոլշևիկներ, որ հանուն կոմունիստական, նեղ դասակարգային շահերի պայքարել են Հայաստանի ու հայ ժողովրդի ազատության ու անկախության դեմ, այսօր ներկայացվում են իբրև ազգային գործիչներ: Մեր կարծիքով՝ դրանց թվին է դասվում նաև Ա. Միկոյանը:

Ա. Միկոյանի քաղաքական դիմանկարը բացահայտելու նպատակով ստորև ներկայացնում ենք մի քանի փաստական նյութեր ու տվյալներ՝ ցույց տալու համար նրա հայացքների ու գործունեության ոչ ազգանպաստ բնույթը, ինչը հիմք է տալիս պնդելու, որ Ա. Միկոյանին չի կարելի դասել ազգային դիմագիծ ունեցող հայ գործիչների շարքը, ուստիև նրա անունը Հայաստանում հավերժացնելու կարիք չկա:

Մնացածի մասին ընթերցողը ինքը կարող է դատել ու գնահատել՝ ստորև բերվող փաստաթղթերին ու նյութերին ծանոթանալուց հետո միայն: Ուստի նա էլ թող որոշի, թե կարելի է կանգնեցնել Երևանի կենտրոնում Ա. Միկոյանի արձանը, թե ոչ:

## 2. Ա. Միկոյանի գործունեությանը վերաբերող փաստաթղթեր ու վավերագիր նյութեր

**Դրվագ 1.** 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունից և ինքնակալության տապալումից հետո՝ դեռևս շարունակվող Առաջին աշխարհամարտի պայմաններում, երբ Ռուսաստանյան կայսրության հասարակական-քաղաքական կյանքը տակնուվրա էր եղել, անորոշություն ու տագնապ էր տիրում նաև ցեղասպանություն ապրած հայության հասարակական-քաղաքական շրջանակներում: Ուստի հայ քաղաքական կուսակցությունները՝ ՀՅԴ-ն, Ս.Դ. Հնչակը, «Մշակը» (հայ կադետները), Հայ սահմանադրական ռամկավարները, հայ էսէժները, սպեցիֆիկները, հայ սոց.-դեմոկրատ մենշևիկները, անգամ պահպանողական համարվող հայ եկեղեցին ու նրա «Հովիտ»-ը, համատեղ ջանքերով ստեղծելով **Միջկուսակցական մարմին** փորձում էին համակարգել ռուսահայոց կյանքը և հնարավորինս դիմակայել հայությանը սպառնացող վտանգներին:

Այդ նպատակով 1917 թ. ամռան-աշնանը գրեթե բոլոր հայ քաղաքական ուժերի մասնակցությամբ նախապատրաստվեց և Կովկասի մայրաքաղաք Թիֆլիսում գումարվեց Արևելահայոց համագումարը (համախորհրդակցությունը), որի աշխատանքների արդյունքում հիմնվեց ազգային բարձրագույն ղեկավար գործադիր մարմին՝ **Հայոց (կենտրոնական) Ազգային խորհուրդ**, որն էլ տնօրինեց արևելահայոց քաղաքական կյանքը և նա էլ, ի վերջո, 1918 թ. մայիսի 28-ին հռչակեց Հայաստանի անկախությունը:

Ինչ էք կարծում, հայ քաղաքական շրջանակներից ովքեր դեմ դուրս եկան այդ ձեռնարկին՝ արևելահայերի համագումարի հրավիրմանը և Հայոց Ազգային խորհրդի գործունեությանը: Իհարկե, միայն բոլշևիկները, դրանց թվում՝ Անաստաս Միկոյանը:

Արևելահայոց համախորհրդակցության նախագահությանն ուղղված ՌՄԴԲԿ (բոլշևիկներին) Թիֆլիսի կոմիտեի գրությունում, կոմիտեի քարտուղար Ա. Միկոյանի ստորագրությամբ, մասնավորապես ասվում էր. «**ՌՄԴԲԿ (բոլշևիկները) բոլկոտ է հայտարարել ազգային խորհրդակցությանը և կարգադրել, որ իր բոլոր անդամները նույնպես չմասնակցեն**»<sup>1</sup>: Արդյունքում՝ Թիֆլիսի, Բաքվի, Ալեքսանդրապոլի, Շուշիի և այլ քաղաքների հայ բոլշևիկները Ա. Միկոյանի հետ միասին բոլկոտեցին և չմասնակցեցին իրենց կողմից ազգայնական համարված այդ ձեռնարկին:

**Դրվագ 2.** 1919 թ. մայիսի 22-ին ՌԿ(բ)Կ կենտկոմին հասցեագրված նամակում Ա. Միկոյանը գեկուցում էր, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը «գաղտնի ռազմական դաշինքի մեջ է մտել Դենիկինի հետ, իսկ հայկական 2-րդ դիվիզիան համարվում է նրա պահեստային ուժը և ցանկացած պահի պատրաստ է հարձակման»<sup>2</sup>: Կովկասի մեկ ուրիշ բոլշևիկ ղեկավար գործիչ Ս. Օրջոնիկիձեն, լրացնելով ու ավելի կոնկրետացնելով խնդիրը՝ ՌՄՖԽՀ Ժողկոմխորհին, ՌԿ(բ)Կ կենտկոմին և Ռազմահեղափոխական կոմիտեին (ՌՀԿ) ուղղված գեկուցագրում հայտնում էր. «Հայաստանը Դենիկինի հետ կնքել է գաղտնի ռազմաքաղաքական պայմանագիր և կարող է թիկունքից հարվածել Վրաստանին և Ադրբեջանին, որպեսզի Հայաստանին միացնի Բորչալուն և Ղարաբաղը»<sup>3</sup>:

**Դրվագ 3.** Բոլշևիկ Ա. Միկոյանի ապագային, ավելի ստույգ՝ հակազգային քաղաքական դիմագիծը լավ հասկանալու համար անաչառ ընթերցողին ներկայացնենք որպես ՌԿ(բ)Կ Կովկասյան երկրային կոմիտեի անդամ նրա գեկուցման թեզիսները՝ «**Կովկասյան հարցի մասին**», որն ուղղված էր Վ. Լենինին: Նրանում մասնավորապես խոսքը վերաբերում է ՌՄՖԽՀ Ժողկոմխորհի 1917 թ. դեկտեմբերի 29-ին ընդունած և 31-ին հրապարակած «Թուրքահայաստանի մասին» դեկրետին (օրենքին) տրված հայավնաս, թուրքամետ մեկնաբանություններին ու գնահատականին:

Հարկ է հիշեցնել, որ Խորհրդային Ռուսաստանի Ժողովրդական կոմիսարների խորհուրդը (ԺԿԽ) Վ. Լենինի գլխավորությամբ 1917 թ. դեկտեմբերի 29-ին ընդունած «Թուրքահայաստանի մասին» դեկրետով հռչակվել էր հայ կամավորական զորախմբերի մասնակցությամբ ռուսական զորքերի կողմից գրավյալ Արևմտյան Հայաստանի հայության ազատ ինքնորոշման իրավունքը՝ ընդհուպ մինչև լիակատար անկախություն<sup>4</sup>: Սույն փաստաթղթի նախապատրաստական աշխատանքներին ակտիվ մասնակցություն են ունեցել բոլշևիկ, դաշնակցական և էսէռ գործիչներ Ստ. Շահումյանը, Վ. Տերյանը, Հ. Զավրիյանը, Ռոստոմը, Պ. Պռոշյանը: «Թուրքահայաստանի մասին» դեկրետը կարելի է դիտել իբրև բոլշևիկների մարտավարական քայլ՝ իրենց հեռագրա նպատակների իրագործման ճանապարհին: Իշխանությունը պահելու համար շուտով Բրեստ-Լիտովսկում բոլշևիկները Գերմանիային և նրա դաշնակիցներին հանձնեցին շուրջ 1 մլն. քառ. կմ տարածք, ուստի մոռացության մատնվեց ոչ միայն Արևմտյան Հայաստանի ինքնորոշման իրավունքը, այլև Թուրքիային հանձնվեցին արևելահայ տարածքները՝ Կարսն ու Արդահանը:

Ներկայացնենք «Կովկասյան հարցի մասին» Ա. Միկոյանի պատրաստած թեզիսները՝ վերցված ռուսական արխիվից: Ծավալի մեծության պատճառով, դրանք տրվում են որոշ կրճատումներով.

– Մեր կուսակցության կենտրոնական մարմինները ներկայումս լավ պատկերացում չունեն Թուրքահայաստանի հարցի մասին: Պատերազմի ավարտից

1 Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 222, ց. 1, գ. 16, թ. 71: [Hayastani azgayin arxiv (HAA), f. 222, c. 1, g. 16, t. 71].

2 www.centrasia.ru / news 2. pep ist = 1456650960

3 Նույն տեղում: [Ibidem].

4 Стен Образование СССР, сборник документов 1917–1924 гг., Москва–Ленинград, 1949, с. 27–28. [Obrazovanie SSSR, Sbornik dokumentov 1917–1924 gg., Moskva–Leningrad, 1949].

հետո ստեղծված իրադրության պայմաններում նման քաղաքականության վարումը հայկական հարցում անմարդկային է, սխալ է և նույնիսկ շատ վնասակար, քանզի այն հակոտնյա է համաշխարհային հեղափոխության և ինպերիալիզմի դեմ պայքարի շահերին ... (Այնուհետև նշվում է, որ պատերազմից առաջ Թուրքահայաստանում պատկառելի տոկոս կազմող արևմտահայությունը բնաջինջ է արվել թուրքական կառավարության քաղաքականության հետևանքով և Թուրքահայաստանը մնացել է առանց հայերի, որ այնտեղ ապրում են գրեթե միայն մուսուլմաններ (թուրքեր և քրդեր և այլն): Իսկ թեզիսների հաջորդ կետում շարունակում է.

- Հայկական շովինիստները հենվելով դաշնակից ինպերիալիզմի և սևհարյուրակային գեներալ Դենիկինի վրա՝ փայփայում են ցնորական «Մեծ Հայաստան» ստեղծելու գաղափարը նրա պատմական սահմաններում՝ Սև ծովից գրեթե մինչև Միջերկրական, յոթը վիլայեթներով: «Մեծ Հայաստան» ստեղծելու ծրագիրը պաշտպանվում է դաշնակից ինպերիալիստների կողմից, որոնք հանձինս հայերի ուզում են տեսնել որպես իրենց հավատարիմ գործակալների և նրանց միջոցով ցանկանում են կողոպտել Թուրքիան, այն դարձնել իրենց գաղութը:

- Մեր կուսակցությունը չի կարող կանգնել հայ ազգայնականների և դաշնակից ինպերիալիստների տեսակետի վրա:

- Մեր կուսակցությունը չի կարող կանգնել ոչ «Մեծ», ոչ «Փոքր» և ոչ էլ «Թուրքահայաստանի» պահանջի վրա: Չէ որ ազգի ինքնորոշման իրավունքը նրա համար հանդիսանում է ոչ թե **պատմական**, այլ **իրական** (ընդգծված է - Ա. Հ.) իրավունք:

- Հայկական հարցում մնալ հին դիրքերում և պաշտպանել անկախ Թուրքահայաստանի գաղափարը, նշանակում է լինել Կովկասյան Հայաստանի շովինիստական ռեակցիոն կառավարության և նրա հովանավոր «Ազգերի լիգայի» հետ՝ ընդդեմ զարթոնող և ծովի պես ալեկոծվող Արևելքի ու Անատոլիայի բազմամիլիոն մուսուլմանների, որոնք արդեն ապստամբական դրոշ են բարձրացնում Անտանտի և նրա գործակալների կողոպտիչ պլանների դեմ:

- Այս իմաստով մեծ սխալ էր Խորհրդային Ռուսաստանի 1917 թ. դեկրետը Թուրքահայաստանի ինքնորոշման մասին, որը չունենալով որևէ դրական արդյունք՝ իր դեմ հանեց ոչ միայն Թուրքիայի, այլև Կովկասի բոլոր մուսուլման բնակչությանը: **Ես ի սկզբանե դեմ էի այդ դեկրետին** (ընդգծումը մերն է - Ա. Հ.): Ուշ է արդեն այդ սխալն ուղղել: Սակայն անհրաժեշտ է անհապաղ նոր, ավելի ճիշտ կուրս վերցնել հայկական հարցում:

- Պետք է ընդունել, որ.

ա) հայ ազգային շարժումն իր դիալեկտիկ զարգացման ընթացքում ազատագրականից վերածվեց դրա հակադրության՝ վնասակար, հանցավոր, ռեակցիոն, որքան էլ ծիծաղելի է՝ նվաճողական («ինպերիալիստական») շարժման:

բ) որ Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարը վնասակար, հանցավոր և ռեակցիոն ցնորական միջոցառում է, որի դեմ պետք է պայքարի մեր կուսակցությունը:

գ) որ հայկական հարցը այլևս չունի նախկին միջազգային նշանակությունը, դադարում է միջազգային, եվրոպական հարց լինելուց և դառնում է զուտ ռուսական՝ Կովկասահայ հարց, ինչպես վրացականը, ադրբեջանականը և այլն:

Թեզիսների վերջում Ա. Միկոյանը առաջարկում էր հիմնել հայ-թուրքական միացյալ (ինտերնացիոնալ) կոմկուս, իսկ, եթե հարկ լինի՝ հայկականը դառնա Թուրքիայի կոմկուսի մի բաժանմունք (սեկցիա):

**1919 թ. դեկտեմբերի սկիզբ, Մոսկվա, բնօրինակ, Ա. Միկոյան, ինքնագիր<sup>5</sup>:**

Ա. Միկոյանի կազմած սույն թեզիսների հիմնական գաղափարախոսությունն այն էր, որ ինքը մերժում է Թուրքիան «կողոպտել ցանկացող» Անտանտի ինպե-

5 Стів Російський державственный архив социально-политической истории (РГАСПИ), ф. 5, г. 1, қ. 1202, № 8-9 293թերս: [Rossiyskiy gosudarstvennyy arxiv social'no-politicheskoy istorii (RGASPII), f. 5. c. 1, g. 1202, t. 8-9 šrjeres].

րիալիստների կողմից հովանավորվող «Մեծ Հայաստանի» գաղափարը, ուստիև որպես նեղ ազգային շահ չճանաչող ինտերնացիոնալիստ՝ ի սկզբանե դեմ է եղել «Թուրքահայաստանի մասին» դեկրետին, ինչը նրա կարծիքով՝ ջուր է լցրել հայկական նացիանալիզմի ջրաղացին:

**Դրվագ 4.** Հայաստանի Հանրապետության հեռագրական գործակալության ամփոփագրերից մեկում կարդում ենք. «1920 թ. մայիսյան ապստամբության կապակցությամբ Բաքվից տարածվում են Միկոյանի, Կոստանյանի, Ավիսի և այլոց կողմից ստորագրված գրպարտչական և նողկալի հեռագրեր, թե իբր Հայաստանում հարյուրներով ու հազարներով գնդակահարում են կոմունիստներին»<sup>6</sup>:

Հայ բոլշևիկների կողմից տարածվող չափազանցված լուրերը նպատակ էին հետապնդում վարկաբեկել Հայաստանի դաշնակցական իշխանություններին, իսկ մյուս կողմից ձախողել Միսկվայում ընթացող հայ-ռուսական բանակցությունները:

Նախ նշենք, որ Մայիսյան խռովության շրջանում հանրապետությունում եղել է առավելագույնը 1000 կոմունիստից ոչ ավելի, ուստի ավելորդ է խոսել հազարների, այն էլ գնդակահարվածների մասին: Իրականում խոսք կարող է լինել մեկ տասնյակ կոմունիստի գնդակահարության մասին, այն էլ հիմնականում՝ ՀՀ արտակարգ դատարանի վճռով: Ինքնադատաստան է իրականացվել մի քանի հոգու՝ ուսուցիչ Հովհաննես Սարովանյանի, բժիշկ Արտաշես Մելքոնյանի և հիվանդ վիճակում Արշալույս Փանյանի նկատմամբ:

**Դրվագ 5.** 1920 թ. ամռանը Ղարաբաղը և Զանգեզուրը Հայաստանին միացնել-չմիացնելու խնդրի քննարկման համատեքստում՝ հուլիսի 10-ին, Ադրբեջանի հեղկոմի նախագահ Ն. Նարիմանովը, ՌԿ(Բ)Կ կենտկոմի Կովկասյան բյուրոյի (Կովբյուրոյի) անդամ Բ. Միկվանին, Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի անդամ Ա. Միկոյանը և ուրիշներ կոլեկտիվ նամակ են ուղարկել ՌԿ(Բ)Կ կենտկոմ, որում նշում էին, որ **Զանգեզուրն ու Ղարաբաղը տնտեսապես կապված են Բաքվի հետ ու որևէ կապ չունեն Երևանի հետ**, ինչպես նաև, որ **Ադրբեջանի հետ միացման են ձգտում նաև Ղարաբաղի ու Զանգեզուրի հեղկոմները**<sup>7</sup>: Այլ խոսքով, Ա. Միկոյանը բնավ կարևորություն չի տվել, թե Ղարաբաղը և Զանգեզուրը Հայաստանի կազմում կլինի, թե Ադրբեջանի: Տեղին է հիշեցնել, որ դրանից հետո չուշացավ Կենտրոնի կողմից հովանավորվող՝ Ղարաբաղի միացումը Ադրբեջանին: Երբ ամեն ինչ խաղաղվեց, ուղիղ մեկ տարի անց՝ 1921 թ. հուլիսի 5-ին, տխրահռչակ Կովբյուրոյի վճռով, առանց քվեարկության Լեռնային Ղարաբաղը բռնակցվեց Ադրբեջանին: Հնարավոր է, որ Զանգեզուրն էլ արժանանար Ղարաբաղի ձակատագրին, եթե չլիներ Գ. Նժդեհի և զանգեզուրցիների հերոսական պայքարը:

Վերոնշյալ նամակում արված առաջարկը վերահաստատվել է Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի բյուրոյի 1920 թ. հուլիսի 15-ի նիստում, որին դարձյալ մասնակցել է Ա. Միկոյանը՝ Նարիմանովի, Օրջոնիկիձեի, Լեգրանի, Հուսեյնովի, Կարակի և այլոց հետ: Բյուրոն նաև առաջարկել է Կարմիր բանակի հրամանատարությանը գրավել Նախիջևանը, Շարուր-Դարալագյազը և այլ տարածքներ<sup>8</sup>: Բացի այդ՝ առաջարկվել է Բ. Լեգրանին խաղաղության պայմանագիր չկնքել Հայաստանի հետ, մինչև որ նրա ներքին իրավիճակի մասին ամբողջական տեղեկություններ չստացվեն<sup>9</sup>:

6 ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 454, թ. 55: [HAA, f. 200, c. 1, g. 454, t. 55].

7 Տե՛ս **Բաղայան Ա.**, Էջեր Զանգեզուրի ինքնապաշտպանության պատմությունից (1920 թ.), «Բանբեր Հայաստանի արխիվների» (ԲՀԱ), Եր., 2015, N 123, էջ 97: [Badalyan A., Ejer Zangezuri inknapašpanwtyan patmwtwycn (1920 t.), Banber Hayastani arxivneri (BHA), E., 2015, N 123].

8 Հարկ է նշել, որ Կարմիր Ադրբեջանի վարքագիծն ու հավակնությունները Հայաստանի հանդեպ շատ ավելի լկտի ու սանձարձակ են եղել, քան անգամ մուսավաթական կառավարությանը: Նա ձգտում էր գրավել նաև Դարալագյազը:

9 Տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», նույն տեղում: [«Banber Hayastani arxivneri», ibidem].

Բերված փաստից կարելի է հետևեցնել, որ ոչ թե ՀՀ կառավարությունն է ձգձգել Ռուսաստանի հետ հաշտության պայմանագրի կնքումը, ինչպես շուրջ մեկ դար շրջանառվել է խորհրդային պատմագրության մեջ, այլ, իր հերթին՝ խորհրդային կառավարությունը Հայաստանի հետ պայմանագիր կնքելու մտադրություն չի ունեցել, ինչպես որ պայմանավորվել էին քեմալականների հետ, որպեսզի ՀՀ-ն ջախջախվի թուրքերի կողմից, ստիպված լինի դիմելու Ռուսաստանին իբրև միջնորդի և վերջինս «օգնության» հասնի ու վերջնական կործանումից «փրկի» Հայաստանն ու հայ ժողովրդին:

Ղարաբաղի և Զանգեզուրի խնդրի առնչությամբ տեղին է ընդգծել, որ Ադրբեջանի հեղկոմի ու կենտկոմի հար և նման հակահայ որոշումները, բացի Միկոյանից, պաշտպանել են նաև Արցախ-Սյունիքի հայ բոլշևիկ ղեկավարներ Հակոբ Կամարին (Բեջանյանը), չեկիստ Արմենակ Ղարաբոյաչյանը, Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի անդամ Լևոն Միրզոյանը և ուրիշներ, ովքեր կապված էին Բաքվի հետ և կատարում էին նրա հրահանգները: Սյուս կողմից՝ վերը բերված փաստերը պատասխանում են ժամանակակից ադրբեջանական կեղծարարների այն պնդումներին, թե իբր Ա. Միկոյանը և էլի հայ առանձին կոմունիստ գործիչներ Ղարաբաղ-Զանգեզուրի հարցում հայկական ազգայնականություն են դրսևորել:

**Դրվագ 6.** Խորհրդային երկրի պատմության մեջ առանցքային նշանակություն է ունեցել ՌԿ(բ)Կ 10-րդ համագումարը (1921 թ. մարտ), որում բազմաթիվ կարևորագույն օրակարգային հարցերի՝ ՆԷՊ-ի, արհմիությունների դերի, կուսակցության միասնության և այլնի վերաբերյալ լսվել է նաև խորհրդային բազմազգ պետության համար շատ զգայուն՝ ազգային հարցը: Դրա մասին համագումարում զեկուցել է ազգությունների գործերի ժողկոմ Ի. Ստալինը, որում քննության են առնվել «տեղական նացիոնալիզմի» և «մեծապետական շովինիզմի» դեմ պայքարի հարցերը: Եվ ահա Ստալինի զեկուցումից հետո ծավալված մտքերի փոխանակման ժամանակ ելույթ է ունեցել նաև Ա. Միկոյանը և Հայաստանին առնչվող իրադարձությունների վերաբերյալ մասնավորապես ասել է. **«Եթե վերցնենք Հայաստանը, ապա այնտեղ մեր կողմից թույլ են տրվել սխալներ (դարձյալ նկատի ունի Թուրքահայաստանի մասին դեկրետը- Ա. Հ.): Քանի որ հայկական բուրժուազիան ունի Թուրքիայի մի մասը (նկատի ունի Արևմտյան Հայաստանը - Ա. Հ.) գավթելու ինպերիալիստական ցանկություն, ուստի մենք այդ ցանկությունները չպետք է քաջալերենք: Մենք պետք է պայքարենք դրանց դեմ, քանի որ նրանք կասեցնում են հեղափոխական շարժումները Կովկասում»<sup>10</sup>:**

**Դրվագ 7.** Եվ վերջապես ընթերցողի ուշադրությունը հրավիրում ենք 1937 թ. քաղաքական բռնաճնշումների բուռն շրջանում Հայաստան ժամանած Ա. Միկոյանի դրսևորած վարքագծի վրա:

Հայտնի է, որ բռնաճնշումների գավեշտի հասնող դրսևորումներից է եղել այն, որ վերևից՝ Կենտրոնից, լիմիտավորված առաջադրանք էր իջեցվում, թե այս կամ այն հանրապետությունում ու մարզում որքան «ժողովրդի թշնամի», տրոցկիստ, հակահեղափոխական, ազգայնական և այլն պետք է ձերբակալվի և դատապարտվի 1-ին կատեգորիայով (այսինքն՝ գնդակահարության) և 2-րդ կատեգորիայով՝ բանտի ու արքորի: Այլ խոսքով՝ խորհրդային-բոլշևիկյան ոգուն ու էությանը բնորոշ՝ պլանավորվում էր ոչ միայն ձերբակալման ենթակա մարդկանց լիմիտը, այլև քանիսը պետք է գնդակահարվեն և որքանը բանտարկվեն ու արքորվեն:

1937 թ. հուլիսից ԽՍՀՄ ՆԳԺԿ գաղտնի հրամանով յուրաքանչյուր հանրապետության, երկրամասի և մարզի համար հաստատվել էին 1-ին և 2-րդ կատեգորիաներով ռեպրեսիաների լիմիտներ<sup>11</sup>: Հասկանալի է, որ նման կարգադրագիր

<sup>10</sup> Десятый съезд РКП(б): Стенографический отчет, М., 1960, с. 208. [Desyati'y s''ezd RKP(b): Stenograficheskiy otchet, M., 1960].

<sup>11</sup> Տե՛ս **Стецовский Ю. И.**, История советских репрессий, т. 1, М., 1997, с. 65. [Stecovskiy Yu. I., Istoriya



(разнарядка) էր իջեցվել նաև Հայաստանի համար: Օրինակ՝ բռնաճնշումների բուռն շրջանում՝ 1937 թ. հուլիսի 11-ին, ՀամԿ(բ) կենտկոմը Հայաստանի համար իջեցրել էր 500 մարդու գնդակահարելու առաջադրանք<sup>12</sup>: Բնականաբար, հանրապետության ղեկավար կուսակցական մարմինները և նրանց անմիջական հրահանգներով գործող անվտանգության և դատաիրավական համակարգը ոչ միայն բարեխղճորեն, ստախանովյան ոգով պետք է կատարեին վերևից իջեցված ձեռքարկությունների պլանային առաջադրանքները, այլև մարքսիզմ-լենինիզմի ու սոցիալիզմի գաղափարներին իրենց նվիրվածությունը ընդգծելու համար, ավելի հաճախ վերադասին զեկուցեին պլանների գերակատարման մասին:

«Ժողովրդի թշնամիների» բացահայտման պլանի գերակատարման «լավ օրինակ» են ցույց տալիս 1937 թ. սեպտեմբերի կեսերին Ի. Ստալինի հայտնի նամակով Հայաստան ժամանած ՀամԿ(բ) կենտկոմի ղեկավար անդամները՝ Քաղբյուրոյի անդամ Անաստաս Միկոյանը և կենտկոմի բաժնի վարիչ Գեորգի Մալենկովը: Բանն այն է, որ Հայաստանի ԺԿԽ-ի նախկին նախագահ Ս. Տեր-Գաբրիելյանի՝ Ա. Խանջյանի վարկածին մոտ սպանությունից կամ ինքնասպանությունից և ՀԿ(բ) կենտկոմի սեպտեմբերյան (15-23) պլենումում հանրապետության ղեկավար կազմի փոփոխությունից հետո (ԿԿ-ի 1-ին քարտուղարի պաշտոնում Լ. Բերիայի առաջարկով Ա. Ամատունուն փոխարինում է Գր. Հարությունյանը), Միկոյանը, Մալենկովը և ԽՍՀՄ ՆԳԺԿ քննիչների խմբի ղեկավար Միխայիլ Լիտվինը սեպտեմբերի 22-ին գաղտնի ձեպագիր (депеша) են ուղարկում Մոսկվա՝ ՀամԿ(բ) կենտկոմ: «Հայաստանում, - կարդում ենք մոսկովյան վավերագիր նյութերի հիման վրա շարադրված ճանաչված իրավագետ, պրոֆեսոր Յուրի Ստեցովսկու մենագրությունում, - բացահայտվում են ավելի մեծ քանակությամբ դաշնակների և հակախորհրդային այլ տարրերի սանձարձակ խրախճանքի փաստեր: Դրա համար Հայաստանում դրանց լիակատար մաքրման համար խնդրում ենք թույլատրել լրացուցիչ գնդակահարել 700 մարդ դաշնակներից և այլ հակախորհրդային տարրերից: 1-ին կատեգորիայով թույլատրված 500 մարդու լիմիտը արդեն սպառվում է»<sup>13</sup>: Այդ հեռագրից երկու օր անց կենտկոմը որոշում է կայացնում. «ՀԿ(բ) կենտկոմին թույլատրել 1-ին կատեգորիայի ռեպրեսիայի ենթակյանների թիվը հասցնել 1500 մարդու»<sup>14</sup>: Եթե Մալենկովի և Լիտվինի պարագայում՝ որպես այլազգիների, ինչ որ կերպ կարելի է հասկանալ, ապա Միկոյանի՝ որպես հայ մարդու վրա է ծանրանում հարյուրավոր անմեղ ազգակիցների կործանման մեղքը:

Եվս մի միջադեպ. այդ ժամանակների համար բնութագրական է, որ Ամատունու պաշտոնավարումից հետո՝ 1937 թ. սեպտեմբերյան օրերին, Հայաստանի քաղաքական կյանքը փաստորեն տնօրինող Միկոյանին նամակով դիմել է Ե. Չարենցի կինը՝ Իգարելան, ամուսնուն բանտից ազատելու հույսով: Բայց մեծանուն գրողին ազատելու փոխարեն կնոջն էլ են ձերբակալում<sup>15</sup>: Իգարելա Չարենցը 5 տարով արքորվում է Ղազախստան՝ ամուսնու «գործը» թաքցնելու մեղադրանքով<sup>16</sup>:

Այսպիսով, հիմնվելով Ա. Միկոյանի գործունեության վերը բերված մի քանի դրվագների վրա՝ կարծում ենք՝ ընթերցողը պատկերացում կազմեց, որ նա եղել է խորհրդային կուսակցական-պետական ղեկավար գործիչ, անմնացորդ կերպով նվիրված է եղել կոմունիստական-բոլշևիկյան կուսակցության գաղափարներին ու ծրագրերին, ուստի նրա համար էական նշանակություն չեն ունեցել հայ ժողովրդի ազգային շահերն ու խնդիրները: Դրա համար էլ իր ելույթներում ու գործելակերպում

sovetskix repressiy, t. 1, M., 1997].

12 Տես **Հարությունյան Գր.**, Կյանքը և գործունեությունը, Եր., 2000, էջ 38: [Harutywnyan Gr., Kyank ev gorcwnewywn, Er., 2000].

13 **Стецовский Ю. И.**, История советских репрессий, т. 1, М., 1997, с. 66. [Stecovskiy Yu. I., Istoriya sovetskix repressiy, t. 1, M., 1997].

14 **Стецовский Ю. И.**, նույն տեղում: [Stecovskiy Yu. I., Istoriya sovetskix repressiy, t. 1, M., 1997].

15 Տես **Գասպարյան Գ.**, Փակ դռների գաղտնիքը, Եր., 1994, էջ 35: [Gasparyan D. pak dneri gağtnik, Er., 1994].

16 Տես **Ղազախցեյան Վ.**, 1937-ը Հայաստանում, Եր., 2004, էջ 27: [Gazaxecyan V. 1937- Hayastanwm, Er., 2004].

Միկոյանը կտրականապես դեմ է եղել Հայկական հարցի քիչ թե շատ հայանպաստ լուծմանը, անգամ Վ. Լենինի ստորագրած «Թուրքահայաստանի մասին» դեկրետին: Նույն կերպ, Արցախի խնդրում նա պաշտպանել է Ադրբեջանի կոմկուսի ղեկավարների տեսակետը: Ա. Միկոյանի նման ապագգային դիրքորոշումն է եղել այն հանգամանքներից մեկը, որ նա իր երկարամյա գործունեության ընթացքում շարունակաբար բարձրացել է կուսակցական-պետական ղեկավար պաշտոնների սանդղակով և ոչ մի անգամ չի սայթաքել, անգամ ռեպրեսիաների դաժան տարիներին: Ուրեմն Ա. Միկոյանը, եղել է սոսկ հայկական արմատներ ունեցող Խորհրդային Միության ճանաչված պետական գործիչներից մեկը, իսկ Հայաստանին ու հայ ժողովրդի ծառայելու տեսակետից չկան բավարար հիմքեր նրան համարելու հայ ազգային գործիչ: Ուստի բացարձակապես անընդունելի է Երևանի կենտրոնում նրա արձանը կանգնեցնելու վերաբերյալ հասարակական որոշ շրջանակների առաջարկը:

## Ամփոփում

Վերջին շրջանում մեզանում հասարակական և նույնիսկ իշխանական մակարդակներով քննարկումների ու բանավեճերի նյութ են դարձել խորհրդային ժամանակաշրջանի կուսակցական և պետական մի շարք հայագի գործիչների հիշատակը հավերժացնող փողոցների, հուշարձանների, հուշատախտակների և այլնի անվանափոխության կամ նորերի տեղադրման հարցերը: Հանրային մակարդակով քննարկվող թեմաներից մեկն էլ խորհրդային ժամանակաշրջանի կուսակցական և պետական ականավոր գործիչ **Անաստաս Միկոյանի** արձանը Երևանի կենտրոնում տեղադրելու հարցն է:

Անշուշտ, Ա. Միկոյանը համարվում է խորհրդային պետության կուսակցական և պետական ճանաչված գործիչներից մեկը, որն իր երկարամյա գործունեության ընթացքում հասել է շատ բարձր դիրքերի ու պաշտոնների: Խորհրդային պետությունը դեռ Ա. Միկոյանի կենդանության օրոք նրա անունն ու գործը հավերժացնելու համար քաղաքներ ու փողոցներ է անվանակոչել, այդ թվում Խորհրդային Հայաստանում:

ԽՍՀՄ փլուզումից և կոմունիստական ամբողջատիրության վերացումից հետո խորհրդային-կոմունիստական ժամանակների մի շարք պարտադրաված արժեքներ իրավացիորեն վերանայման ենթարկվեցին: Դրա հետևանքով կատարվեցին հրապարակների, փողոցների անվանափոխություններ, այդ թվում՝ Ա. Միկոյանի: Սակայն վերջին տարիներին խորհրդային կարոտախտով ապրող կոմունիստամետ ուժերը, հավանաբար իշխանությունների գիտությամբ, փորձում են վերակենդանացնել խորհրդային քաղաքական ու հոգևոր անցյալը և նոր անվանակոչություններից զատ, կանգնեցնել բոլշևիկների, այդ թվում՝ Ա. Միկոյանի, արձանները:

Խորհրդային շրջանի կուսակցական և պետական գործիչների մեջ եղել են հայ ժողովրդի կողմից գնահատված և բարի անուն ու հետք թողած առանձին դեմքեր: Սակայն Ա. Միկոյանի խնդրում տասնամյակների ընթացքում հայ հանրության մեջ ձևավորվել է ընդհանուր առմամբ բացասական հայացք՝ Հայաստանի ու հայ ժողովրդի ազգային շահերի հանդեպ նրա անտարբեր լինելու պատճառով:

Փաստաթղթերն ու նյութերը վկայում են Ա. Միկոյանի ոչ հայանպաստ գործունեության մասին: Այսպես՝ Թիֆլիսի կոմիտեի քարտուղար Միկոյանի հետ միասին միայն հայ բոլշևիկները բոլկոտեցին ու չմասնակցեցին Արևելահայոց համագումարին՝ այն դիտելով իբրև **ազգայնական ձեռնարկ**: Այնուհետև, 1919 թ. դեկտեմբերին Վ. Լենինին ուղղված իր թուրքամետ թեզիսներում Ա. Միկոյանը սխալ էր համարում Ռուսաստանի խորհրդային կառավարության ընդունած Թուրքահայաստանի մասին դեկրետը՝ արևմտահայությանը ազատ ինքնորոշման իրավունք տալու վերաբերյալ, ինչը նրա կարծիքով ջուր էր լցրել «հայ ազգայնականների» ջրաղացին: Ա. Միկոյանի կարծիքով՝ հայ բուրժուազիան ցնորական հույսեր է

փայփայել «գավթել Թուրքիայի մի մասը», իսկ նրա հովանավոր Անտանտի իմպերիալիստները՝ կողոպտել Թուրքիան և դարձնել իրենց գաղութը:

Նույն կերպ **Միկոյանի վերաբերմունքը Ժխտողական է եղել Ղարաբաղը և Զանգեզուրը Հայաստանին միացնելու հարցում:**

Բացի այդ՝ նա դեմ է եղել, որ Լ. Շանթի գլխավորած ՀՀ պատվիրակությունը բանակցի և խաղաղության պայմանագիր կնքի Խորհրդային Ռուսաստանի հետ:

Եվ, վերջապես, 1937 թ. խորհրդային երկիրը պատուհասած քաղաքական բռնաճնշումների բարձրակետին Հայաստան ժամանած ՀամԿ(ք)Կ կենտկոմի քաղբյուրոյի անդամ Ա. Միկոյանը մեղքի որոշակի բաժին ունի գնդակահարվածների ու արտոյալների ցուցակները հարյուրավոր անմեղ հայ մարդկանցով ուռձացնելու գործում:

**Այսպիսով, վերոշարադրյալ փաստերը հիմք են տալիս եզրակացնելու, որ բարոյական չէ (անընդունելի է) Հայաստանում Ա. Միկոյանի անվան հավերժացման ամեն մի նոր փորձ:**

**Արարատ Մ. Հակոբյան** – գիտական հետաքրքրություններն ընդգրկում են 20-րդ դարի Հայոց պատմության առանցքային հիմնահարցերը: Հրատարակել է մի շարք արժեքավոր մենագրություններ Հայաստանի առաջին հանրապետության պատմության մասին: Ուշագրավ են նաև հեղինակի աշխատություններն ու հոդվածները՝ Փետրվարյան ապստամբության և ընդհանրապես՝ Խորհրդային Հայաստանում մենատիրական վարչակարգի հաստատման նախնական ժամանակաշրջանի՝ 1920-ական թվականների վերաբերյալ:

## Summary

### ON THE QUESTION OF THE ASSESSMENT OF A. MIKOYAN AS A PARTY-STATE ACTOR

**Key words** – A. Mikoyan, post, nostalgia for 1937, Bolshevik, facts, decree, Communist Party, episode, Karabakh, self-determination, independence.

Ararat M. Hakobyan

Recently, the issue of renaming streets, monuments, memorial plaques or other neighborhoods named in memory of several party and state figures of the Soviet era has become the subject of discussions at the social and even governmental levels in Armenia. One of the publicly discussed topics is the issue of placing a statue of Soviet and state figure Anastas Mikoyan in the center of Yerevan.

Among the party and state figures of the Soviet era there were people whom the Armenian people valued and respected. However, for decades, the Armenian society as a whole has negatively treated A. Mikoyan because of the indifference of the latter toward the national interests of the Armenian people.

Separate documents and materials presented in a number of episodes in this publication indicate the non-Armenian activities of Mikoyan. Thus, only the Armenian Bolsheviks, along with A. Mikoyan, who was the secretary of the Committee in Tbilisi at that time, boycotted and did not participate in the East

Armenian Congress considering it a “nationalistic enterprise”. Then, in December 1919, while addressing his pro-Turkish theses to V. Lenin, Mikoyan considered a mistake the Declaration on Turkish-Armenia, adopted by the Soviet government of Russia: according to this declaration, Western Armenians were given the right to free self-determination. In his opinion, it was playing into hands of “Armenian nationalists”. A. Mikoyan believed that the Armenian bourgeoisie cherished insane hopes to “seize a part of Turkey”, and its sponsor – the Entente’s imperialists wanted to rob Turkey and make it a new colony.

Similarly, Mikoyan’s attitude was negative in the issue of the annexation of Karabakh and Zangezur to Armenia.

In addition, he was against the Armenian delegation led by L. Shant to hold talks and sign a peace treaty with Soviet Russia.

And finally, in 1937, A. Mikoyan, already a member of the Politburo of the Central Committee of CPSU, who arrived in Armenia at the height of political repression that fell to the share of the Soviet state, has a certain responsibility for expanding the lists of innocent Armenians executed and expelled by hundreds.

Thus, the facts cited above give grounds to conclude that any attempt to perpetuate the name of A. Mikoyan in Armenia is simply immoral (unacceptable).

## Резюме

### **ПО ВОПРОСУ ОЦЕНКИ А. МИКОЯНА КАК ПАРТИЙНОГО- ГОСУДАРСТВЕННОГО ДЕЯТЕЛЯ**

**Ключевые слова** – А. Микоян, должность, ностальгия по 1937-ому году, большевик, факты, декрет, компартия, эпизод, Карабах, самоопределение, независимость.

Арапат М. Акопян

В последнее время вопрос о переименовании улиц, памятников, мемориальных досок названных в память о партийных и государственных деятелях советской эпохи в Армении стал предметом дискуссий на общественном и даже правительственном уровнях. Одной из публично обсуждаемых тем является вопрос размещения статуи советского и государственного деятеля Анастаса Микояна в центре Еревана.

Среди партийных и государственных деятелей советской эпохи были люди, которых армянский народ ценил и уважал. Однако на протяжении десятилетий армянское общество в целом отрицательно относилось к А. Микояну из за равнодушия последнего к национальным интересам армянского народа.

Отдельные документы и материалы, представленные в ряде эпизодов в этой публикации свидетельствуют об антиармянской деятельности Микояна. Только армянские большевики вместе с секретарем Тифлисского

комитета Микояном бойкотировали и не приняли участия в Восточноармянском конгрессе посчитав его «националистическим начинанием». Затем, в декабре 1919 года, в своих протурецких тезисах обращенных к В. Ленину А. Микоян считал принятую советским правительством России «Декрет о Турецкой Армении», согласно которой западным армянам было дано право на свободное самоопределение, ошибкой. По его мнению это было на руку «армянским националистам». А. Микоян считал, что армянская буржуазия лелеяла безумные надежды «захватить часть Турции», а ее спонсор – империалисты Антанты хотели ограбить Турцию и сделать ее своей колонией.

Точно так же отношение Микояна было отрицательным в вопросе присоединения Карабаха и Зангезура к Армении.

Кроме того, он был против, чтобы армянская делегация во главе с Л. Шантом в 1920 году провела переговоры и подписала мирный договор с Советской Россией.

И наконец, в 1937 году, член Политбюро ЦК ВКП(б) А. Микоян, прибывший в Армению в разгар политических репрессий выпавших на долю советского государства, несет определенную ответственность за расширение списков сотнями казненных и изгнанных невинных армян.

Таким образом, приведенные выше факты дают основание сделать вывод о том, что любая попытка увековечить имя А. Микояна в Армении просто аморальна (неприемлема).